«ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ««ՀԱԷԿ» ՓԲԸ ՏԳ3,4 ТВВ-220-2ЕУ3 ՏԻՊԻ ՏՈՒՐԲՈԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ» ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-22/22-02/21

ք. Մեծամոր «05» 01 2023..թ.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրենի տեղակալ–ընդհանուր հարցերի գծով տնօրեն Սամսոն Մաթևոսյանի, որը գործում է գլխավոր տնօրենի կողմից 06.05.2022թ. տրված լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և

«ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Մուրադյանի, որը գործում է «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«ՀԱԷԿ» ՓԲԸ ՏԳ3,4 ТВВ-220-2ЕУ3 տիպի տուրբոգեներատորների միջին նորոգման** աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **29200000 (քսանինը միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀԱԷԿ» ՓԲԸ	**«ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ**
0910, ք. Մեծամոր, Արմա«վիրի մարզ,	0090, ք. Երևան, Լյուքսեմբուրգի 2-րդ
Հ/Հ 1930000199200100	նրբանցք 5-22
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,	Հ/Հ 220463334148000,
ՀՎՀՀ 04401874,	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, ք. Երևան,
Հեռ./ֆաքս՝ 28-18-80, 28-06-69,	ՀՎՀՀ 00933437,
Հեռ.՝ 20-04-91, 33-40	**Հեռ.**՝ 033-220-380
E-mail: anpp@anpp.am	**E-mail**: info@voltamper.am
..... **Ս. Մաթևոսյան**	..... **Ա. Մուրադյան**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«05» 01 2023թ. կնքված
***N ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-22/22-02/21** ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավորի գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
1	45221500	***ՏԳ-3 և ՏԳ-4 փուրբոգեներատորների միջին նորոգում:*** ****Աշխատանքները կատարել համաձայն ծավալաթերթի հաստատված ՀԱԷԿ -ի գլխավոր ճարտարագետի կողմից առ 16.09.2022թ.***	*լրա կազմ*	14600000	**29200000**	2	*Արմավիրի մարզ ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ*	*Աշխատանքի կատարման վերջնաժամկետը՝* ***ՊՆԿ 2023 (մայիս-հուլիս) ավարտից 10 (տաս) օրացույցային օր առաջ***

Լրացուցիչ պայմաններ՝

1. *Աշխատանքի կատարման ավարտին տրամադրվում է* ***մեկ տարվա*** *երաշխիք (**365 օրացույցայի օր**):*
2. *Աշխատանքի կատարման ավարտին պետք է ներկայացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ–ում գործող (Акт о ремонте оборудования выполненного сторонними организациями, Бланк исполнительных документов ТОиР по Акту о ремонте (УД. АТД.09.ОПР.001 ут. 10.02.15г. пр. №534 от 23.08.13г.) փաստաթղթերը (ձևաթղթերը կցվում են):*
3. *Մասնակցին ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության տրամադրման ժամկետը՝* ***10 (տաս) աշխատանքային օր****:*
4. *Թույլատրելի խախտման ժամկետ* ***չի նախատեսվում****:*
5. *Կատարողը պետք է պայմանագիրը կնքելուց հետո* ***5 աշխատանքային օրվա ընթացքում*** *Պատվիրատուին ներկայացնել ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ. ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կատարողի կողմից վերընշված փաստաթղթերի ներկայացման համար սահմանված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուն չի երաշխավորում* ***50 օրում*** *անցագրերի տրամադրումը:*
6. *Կատարողը պարտավոր է պահպանել ՀԱԷԿ-ում գործող ներօբյեկտային և անցագրային ռեժիմի բոլոր պահանջները:*

7. *Սույն ընթացակարգի շրջանակներում Կատարողի պահանջով Պատվիրատուի աշխատակիցների արտաժամ աշխատելու վճարները վճարվելու են Կատարողի կողմից՝ լրացուցիչ կնքվելիք պայմանագրի հիման վրա:*

Ծանոթություն՝
Պայմանագրի կառավարիչ Ա. Գրիգորյան հեռ. 010282960, E mail ashot.grigoryan@anpp.am

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ «ՀԱԷԿ» ՓԲԸ	ԿԱՏԱՐՈՂ «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ
..... Ս. Մաթևոսյան	..... Ա. Մուրադյան

Հաստատում եմ
ՀԱԷԿ գլխավոր ճարտարագետ
______ Ա. Ռ. Գրիգորյան
«16» 03 ______2022թ.

Ծավալաթերթ
«ՀԱԷԿ» ՏԳ-3,4 ТВВ-220-2ЕУ3 տիպի տուրբոգեներատորների միջին նորոգում
2023 թ. ՊՆՎ-ի ընթացքում

հ/հ	Աշխատանքի անվանումը	Չափի միավ.	Քանակը	Աշխատանքի կազմակերպում և ղեկավարում	Ծանոթություն
	Նախապատրաստական աշխատանքներ				
1	Անջատումից առաջ տուրբոգեներատորի անգազանցիկության (газоплотность) ստուգում	հատ	2	ԷԱ	կատարում է ՀԱԷԿ-Ը (ԷԱ)
2	Տուրբոգեներատորի կանգ	հատ	2	ԷԱ	կատարում է ՀԱԷԿ-Ը (ԷԱ)
3	Գազահովացուցիչներից ջրի դատարկում	հատ	8	ԷԱ	կատարում է ՀԱԷԿ-Ը (ԷԱ)
4	Գրգռման մալուխների անջատում	լրակազմ	2	ԷԱ	կատարում է ՀԱԷԿ-Ը (ԷԱ)
5	Վերանորոգման հարթակների(площадок), միջոցների, չափիչ գործիքների և հարմարանքների պատրաստում: Վերանորոգման հարթակների մաքրում			ԷԱ	
6	Լիսեռադարձիչի էլեկտրական շարժիչ վերատեղադրում	հատ	2	ՏԱ, ԷԱ	
	Արտաքին վահանների և օդափոխության վահանների նորոգում				
1	Ճակատային և օդափոխության վահանների վերևի կեսերի հանում	հատ	4	ԷԱ	
2	Ճակատային և օդափոխության վահանների ներքևի կեսերի հանում (անհրաժեշտության դեպքում)	հատ	4	ԷԱ	
3	Ճակատային վահանի կեսերի՝ ստատորի իրանի հետ կցորդման մակերևույթի նորոգում առանց մեխանիկական մշակման (անհրաժեշտության դեպքում), խտարարի փոխարինումով	հատ	4	ԷԱ	
	Գազահովացուցիչների նորոգում				
1	Բոլոր օդահովացուցիչների հանում (անհրաժեշտության դեպքում)	հատ	8	ԷԱ	

2	Քփարար միջադիրների փոխարինում, խողովակային տախտակների պաշտպանիչ շերտի վերականգնում, խողովակների մաքրում (անհրաժեշտության դեպքում)	հատ	8	ԷԱ	
	Ռոտորի նորոգում				
1	Ստուգում և անհրաժեշտության դեպքում կենտրոնադրում ըստ կիսակցորդիչների	հատ	2	ՏԱ	
2	ԳԼՓ-ի (գեներատորի լիսեռի քեփեցում) հատվածում գտնվող լիսեռի վզիկների աշխատանքային մակերեսները որոնց մաշվածությունը գտնվում է թույլատրելիի սահմաններում ստուգում և ճշտաբերում (մեխանիկական հղկում կամ շրջատաշում, ձեռքով մշակում)	հատ	4	ՏԱ	
3	Հպակային օղակների մաքրության, խորդուբորդության, ձևի և մաշվածության ստուգում, անհրաժեշտության դեպքում շրջատաշում և հղկում	հատ	4	ԷԱ	
4	Լիսեռի վզիկների մաքրության, խորդուբորդության, ձևի և մաշվածության ապահովում	հատ	4	ՏԱ	
5	Հավասարակշռման ծանրուկների ամրացման ստուգում	լրա կազմ	2	ԷԱ	
6	Զննում և անհրաժեշտության դեպքում օդափոխիչ թիակների և նրանց ամրացման թերությունների վերացում	հատ	2	ԷԱ	
	Ստատորի նորոգում				
1	Ստատորի մտոցի բացում, ՏԳ-ի ներքին խոռոչների մաքրում աղբից և յուղից	հատ	2	ԷԱ	
2	Ստատորի փաթույթի ճակատային մասերի տեսողական ստուգում ըստ թուլացման և մաքրության, անհրաժեշտության դեպքում ամրացում և մաքրում	հատ	2	ԷԱ	
3	Ջրային ուղիների մաքրում (անհրաժեշտության դեպքում)	լրակազմ	2	ՏԱ	
	Խոզանակա-հպակային ապարատի (ԽՀԱ) նորոգում				
1	Ձայնամեկուսիչ պատյանի հեռացում և հայտնաբերված անսարքությունների վերացում	լրակազմ	2	ԷԱ	
2	Խոզանակի բլոկների հեռացում հետագա տեղադրմամբ	լրակազմ	2	ԷԱ	
3	Շահագործման ժամանակ հայտնաբերված անսարքությունների ստուգում և վերացում ,ըստ շահագործման ձեռնարկի	լրակազմ	2	ԷԱ	
	Գեներատորի լիսեռի քփեցման նորոգում				
1	Քփեցման քանդում	լրակազմ	4	ՏԱ	
2	Ստուգումով հայտնաբերված դետալների նորմալ մաշվածության ճշգրտում	լրակազմ	4	ՏԱ	
3	Անջատատեղերի քփեցման միջադիրների և քուղերի փոխարինում	լրակազմ	4	ՏԱ	
4	Քփեցման ներդրակների և մեկուսիչ դետալների փոխարինում (անհրաժեշտության դեպքում)	լրակազմ	4	ՏԱ	

	Հենարանային առանցքակալի նորոգում				
1	Քանդում	հատ	4	ՏԱ	
2	Քփեցման միջադիրների և քուղերի փոխարինում	լրակազմ	4	ՏԱ	
3	Ստուգումներով հայտնաբերված դետալների նորմալ մաշվածության ճշգրտում (անհրաժեշտության դեպքում մեխանիկական մշակում)	լրակազմ	4	ՏԱ	
	Ջերմահսկման նորոգում				
1	Դիմադրության ջերմակերպափոխիչի ստուգում	լրակազմ	2	ՋԱՇԱ	կատարում է ՀԱԷԿ-Ը (ՋԱՇԱ)
	Փորձարկումների անցկացում				
1	Գեներատորի փորձարկում համաձայն ուղեցույց փաստաթղթի ՈՒՓ (РД) 34.45-51.300-97 "Էլեկտրական սարքավորումների փորձարկման ծավալ և ստանդարտները"	լրակազմ	2	էս	կատարում է ՀԱԷԿ-Ը (էս)

Ծանոթություն

1.Մաքրումը, հավաքումը, պատճառների վերլուծումը, հայտնաբերված արատների և շեղումների վերացումը ծավալաթերթի մեջ նշված չեն, քանի որ համարվում են նորոգման ժամանակ անպայման իրագործելի:

2.Եթե անհրաժեշտ է իրականացնել սույն ծավալաթերթով չնախատեսված աշխատանք, կազմվում է աշխատանքի լրացուցիչ ծավալաթերթ

3. Տեխնիկական վերահսկումը, փորձարկումները և նորոգման իրագործման պահանջները՝ համաձայն ՕԵՀ 469.120 ТВВ-220-2ЕУ3 տեսակի եռաֆազ սինխրոնային տուրբոգեներատոր: Հրահանգ ըստ ծավալի, նորոգումների պլանային պարբերականության, ցուցումներ տուրբոգեներատորի հանգույցների նորոգման իրագործման:

4. Ստատորի փաթույթի ջրահովացման համակարգի, գեներատորի գազամատակարարման և լիսեռի խցվածքի յուղամատակարարման համակարգերի նորոգումը տվյալ ամփոփագրում ներառված չեն:

5. Հաշվետվական փաստաթղթերը պետք է ձևակերպված լինեն համապատասխան ՀԱԷԿ-ում գործող ձևերի: Պետք է ձևակերպվեն նաև միջանկյալ ակտեր, արձանագրություններ, տեղեկաքարտեր և այլն:

6. ՏՎԲ-ն մասնակցում է անսարքությունների հայտնաբերման և տեխնիկական վերահսկման աշխատանքներին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Ս. Մաթևոսյան

ԿԱՏԱՐՈՂ
«ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ

Ա. Մուրադյան

Հավելված N 2
«05» 01 2023թ. կնքված
***N ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-22/22-02/21** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	*45221500*	***«ՀԱԷԿ» ՓԲԸ ՏԳ-3,4 ТВВ-220-2ЕУ3 տիպի տուրբոգեներատորների միջին նորոգում***						29200000	29200000	29200000	29200000	29200000	29200000	29200000	**29200000**

Գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Ս. Մաթևոսյան

ԿԱՏԱՐՈՂ
«ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ

Ա. Մուրադյան

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն